# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի Հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6.1.-ին հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ծառածածկ տարածքներ՝ ցամաքային տարածքի մաս, որը ծածկված է ծառային բուսականությամբ, ընդգրկում են հողային ֆոնդի բնակավայրերի հողերից՝ խառը կառուցապատման, ընդհանուր օգտագործման և այլ հողերը՝ մասնակի, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ մասնակի և անտառային հողերից՝ անտառները.»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 13.1-ին կետով.

«13.1) Հողամասում գտնվող ծառային բուսականությունը վնասելու արգելքով.»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են՝ հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, լողափեր և այլ տարածքներ.»,

2) լրացնել հետյալ բովանդակությամբ նոր 6.1-ին կետ.

«6.1) բնակավայրերի ծառածածկ տարածքներ են.»:

**Հոդված 4**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: